

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թվականի հուլիսի 1-ի N 1210-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1680-Ն որոշման 2-րդ կետը « ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայությանը հանձնելու նպատակով

### **կարգադրում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Բիծյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ /նախագահ/

Սաֆարյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ

Քոլոզյան Ս. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ

Սմբատյան Ա. - «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի արհեստագործական ուսումնարան >> ՊՈԱԿ տնօրեն

Ավետիսյան Ն. - «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ հաշվապահ

2. Հանձնաժողովին՝ /նախագահ՝ Հ.Բիծյան/

1) պահանջվող տեղեկատվությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն.

2) կատարված աշխատանքների մասին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ